



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյութը առեղեկոր համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՅՈՒՅ ՀՅՈՂ ՓՈՂԱԿՈՄԱՏ

№ 77

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 77

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ,

—ԽՆԱՄՔՆ ՈՒ ԿԵՐԱԿՐԵԼԸ —



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Եկեղեց - 1930

VI. 55. 1950

LIBRARY

1950
1950
1950
1950

1950 1950 1950 1950

1950 1950 1950 1950

1950 1950 1950 1950

ՀՅԻՆՑ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ

№ 77

ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 77

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

36.52

+

ՀԱՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ,
— ԽՆԱՄՔՆ ՈՒ ԿԵՐԱԿՐԵԼԸ —

A 4293



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Եկեղեց - 1980

Հրատ. № 1207
Գրառ. № 3088 (լ.·) Պատ. № 238. Տիրաժ 5000
Գետհրատի 2-րդ տպարան Յերևանում

ՀԱՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ, ԽՆԱՄՔՆ ՈՒ
ԿԵՐԱԿՐԵԼԸ

Յերբ խոսք ե լինում թոշնաբուծության
մասին, շատերն ուղղակի պնդում են, վոր հա-
վերից, բացի մասսից, վոչինչ չի կարելի ստանալ:

Հարց ե ծագում՝ յեթե իսկապես թոշնաբու-
ծությունը մասսակար գործ լիներ, նրանով կպա-
րապելին, որինակ, Դանիալում, վորտեղ յուրա-
քանչյուր գյուղացիական տնտեսության վրա գա-
լիո և 100 հավ, իսկ մեզ մոտ՝ ԽՍՀՄ-ում՝ միայն
8 հավ։

Դանիայի գյուղացիները շատ շուտ զգացին,
վոր ժամանակն ե թողնել հավ պահելու պապե-
նական ձևերը և չտփաղանց հաջող ու իրենց
համար մեծ ոգտավետությամբ անցան և այժմ
դործադրում են ժամանակակից գիտության ձե-
վերը և ուշադրությամբ լսում ու հետևում մաս-
նագետների առաջադրած նոր յեղանակներին։

Մեր գյուղացիական պայմաններում թըռ-
չուններ պահելն ու խնամելը մինչև որս հել
գտնվում ե սկզբնական-վայրի վիճակում, և ի-
րոք, յեթե մենք նայենք, թե ինչպես ելին պահ-

վում թոշունները սրանից 200—300 տարի առաջ, կտեսնենք, վոր վոշ մի տարբերություն չկա:

Ինչպես այն ժամանակ, այնպես ել այժմ, հավը ինքնազլուխ ե, անապաստան, քաղցած և չունի իրեն հատուկ շենքը։ Անկասկած դեպի հավերն ունեցած նման վերաբերմունքը և խնամքը կստեղծի սակավարդունավետություն, անշահավետ հավապահություն։

Յեվրոպայի գլուղացիները տարիներ շարունակ աշխատել են թոշունների բարելավման վրա և ընդամենը 20—30 տարի առաջ լուրջ ուշադրություն դարձրին թոշնաբուծության վրա։ Դեպի գործն ունեցած սիրով, զինված գիտությամբ ու հմտությամբ, տարեցտարի ընտրելով ամենայավ ձվաբեր հավերը, կանոնավոր կերակրելով ու խնամելով, Յեվրոպայի գյուղացիները հասան այն դրության, վոր նրանց տընտեսության մեջ յուրաքանչյուր հավը տարեկան միջին հաշվով տալիս ե 150 ձու և ավելի, իսկ կան և այնպիսիները, վորոնք տալիս են մինչև 300 ձու։

Յեթե մեր դյուղացին ունինա 50 հատ՝ տարեկան 150 ձու տվող հավ, ապա ձվերի վաճառքից ստացած յեկամուտը մեծ ոգնություն կլինի նրա տնտեսությանը։ Յեթե հաշվենք ձվի հատը

5 կոպ., կստանանք $150 \times 50 \times 5 = 375$ ռ.: Այդ
դումարից դուրս գալով կերակրելու և խնամե-
լու ծախսերը՝ 100 ռ., մաքուր յեկամուտ կա-
րելի յե ստանալ 50 հավից տարեկան 275 ռուրիֆ,
ուրիշ խոսքով ասած՝ լուրաքանչուր մեկ հազ
գյուղացուն կտա տարեկան 5 ռ. 50 կոպ. մա-
քուր յեկամուտ:

Հավերին խնամելը շատ հեշտ եւ հաջողու-
թյամբ կարելի յե հանձնարարել կանանց, ան-
շափահաներին և վերջապես ծերերին: Այս հան-
գամանքը թոշնաբուծությունը դարձնում եւ հա-
տուկ ձեռնտու գործ, վորովհետեւ տղամարդկանց
կարելի կլինէ ավելի ծանր աշխատանքների
դնել:

Այժմ տեսնենք, թե գյուղացին ինչ եւ ստա-
նում իր հավերից: Նրա հավի միջին ձվաբերու-
թյունը հավասար եւ տարեկան 60-ի: Հաշվելով ձվի
հատը 5 կոպ., կստանանք $60 \times 5 = 3$ ռ., կերա-
կրելն ու պահելը կնստի 2 ռուրիֆ: Կնշանակի
գյուղացին իր մի հավից ստանում եւ 1 ռ. զուտ
յեկամուտ:

Վորտեղ պետք եւ փնտռել թոշնաբուծության
անարդյունավետության պատճառը և բնչպես
վերացնել այն:

Առաջին պատճառը, վոր պետք եւ վերաց-
նել, դա բիշ ձու ածող կամ բոլորովին չածող,

իգուր կեզ ուտող հավերը տնտեսությունից հեռացնելն է:

Եերկրորդ միջոցը՝ թուխսի տակը դնելու համար վերցնել ձվաբերությամբ ամենալավ հավերի խոշոր ու կանոնավոր ձև ունեցող ձվերը:

Առանց խնայելու խոտանի լ (բրակ անել) քույլերին, նիվանդներին, ներս ընկած աչքերով, գունաս կատարով, յերկար «ագռավային» գըլխով, յերկար ու սուր կտցով, նեղ կրծքով, փոքր կտնարքով (փուչիկով), արմունկների մոտ իրար մոտեցած վոտներով, սուր ու յերկար չանկերով, սապատակոր, ծուր պոչ ու նեղ նետույց ունեցող յեզ շուր յեղող ու քառից ուշ իջնող հավերին:

Թողնել—ուժեղներին, ամուրներին, առողջներին, դուրս պրծած աչքերով, կարմիր ու քընդոււս կատարով, լայն ծոծրակով, կարճ կըսցով, լայն կրծքով, մեծ կտնարքով (փուչիկ), իրարից լայն դրված քարակ վոտներով, քորչանենկերով, լայն ու յերկար մեջքով, զարգացած լայն նետույցով, վորպեսզի կոնի վոսկրների սիջեվ (վորը գտնվուս ե սլոյի մոտ) տեղապորվի Յ մատից վոչ պակաս (դեռևս ձու չածող ջանել հատվերի կոնի վոսկրներն ավելի նեղ են լինում) յեվ ուշ քառ յեղող ու քառից շուր իջնող հավերին:

Յեթե անտեսության մեջ այդպիսի ընտրություն կատարել տարեկան 2 անգամ (ամռան վերջը և ուշ աշնանը), ապա վստահ կարելի յե յերաշխավորել, վոր կարճ ժամանակամիջոցում կարելի յե կը կնակի բարձրացնել հավերի ձվաբերությունը և ազատել ավելորդ «բերաններից»:

Դոյլություն ունի հավերին խոտանելու մի ուրիշ ձև, բայց նա յերկարատև և ու շատ ժամանակ և պահանջում: Այդ ձեն այն ե, վոր ստուգիչ բների միջոցով ստուգում են յուրաքանչյուր առանձին հավի ձվաբերությունը, գրաւմ հատուկ ցուցակում և տարվա վերջը հաշվում ածած ձվերի քանակը:

Այս միջոցն ամենից ուղիղն ե ու ճիշտը, և խոտանման ժամանակ սխալներ չեն արվի:

Յեթե հավը շատ ձու յե ածում, ուրեմն և նրա սերունդը շատ կածի: Սրանից յեզրակացնում ենք, վոր պետք ե աշխատել պահել ձվաբերությամբ ամենից լավ հավերի ճուտերը, քանի վոր ձվաբերությունը ժառանգաբար ե անցնում:

Ձվաբերությունը սերնդից սերունդ անցնելու մեջ զլխավոր գերը պատկանում ե աքաղաղին, դրա համար վորպես տոհմացու պետք ե պահել շատ ու խոշոր ձու ածող հավերի ձվե-

ըից յելած աքաղաղին։ Արտադրող աքաղաղը պետք է համապատասխանի հետեւյալ պահանջներին։

Լինի առողջ, ուժեղ, կայտառ, լայն կըրծով, մաքուր, ուժեղ ու հնչուն ձայնով, ամուր, լայն դրված վատներով, դուրս պրծած աչքերով, լայն ծոծրակով, հաս ու կարի կցով, կարմիր կատարով յեվ լայն յերկար մեջով։

Հավերի ձվաբերսւթյունը շատ արագ կարելի լե բարձրացնել, յեթե ձեռք բերվի ձվաբերությունը ստուգված հավից յելած ցեղական աքաղաղ։ Այդ ասպարիզում դրված փորձերը տվել են դրական արդյունքներ։ Փորձի համար վերցրել են 30 հատ գյուղացիական հավ, վորոնց ձվաբերությունը, տարեկան ստուգումից հետո, յեղել ե միջին հաշվով 62 ձու ամեն մի հավին։ Այդ հավերը բաժանվել են 2 հավասար խմբի, ամեն մեկում 15 հավ։ Առաջին խմբին տվել են լեզգորն սպիտակ ցեղի մի աքաղաղ, վորի մայրը տալիս ե յեղել տարեկան 146 ձու։ Լեզգորն աքաղաղից յելած բոլոր հավերը տվել են տարեկան միջին հաշվով 97-ական ձու ամեն մեկը։

Ցերկուրությունին հավերին տվել են հստարակ գյուղացիական աքաղաղ, վորի մայրը տալիս ե յեղել տարեկան 68 ձու։ Այդ աքաղաղից

յելած բոլոր հավերը տվել են տարեկան միջին
հաշվով 65. ական ձու:

Այս փորձից յերևում ե, թե ինչ ոգուտ կա-
ըող ե տալ ցեղական աքաղաղը:

ՀԱՎԻՆ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Թոնաբուծության հիմնական հաջողությունը
կախված է հավերին կանոնավոր կերակրելուց ու
խնամքից: Ինչքան ել հավը լավը լինի, յիթե նը-
րան չկերակրել, նա ընդունակ չի լինի այնքան
ձու ածելու, ինչքան կարող եր ածել կերակրելու
դեպքում:

Կերը ծառացում ե ինչպես հավի կյանքը
պահպանելու, այնպես ել ձուն գոյացնելու հա-
մար: Հենց վոր հավի որդանիզմի մեջ սննդա-
նյութերը շատանում են, քան հարկավոր ե
կյանքը պահպանելու համար, ապա ավելցուկը
գնում է ձուն գոյացնելու:

Սովորաբար հավերն ավելի շատ ձու յեն
ածում գարնանն ու աշնանը և հենց այդ ժա-
մանակ ել նրանք առանձնապես շատ են ուտում,
վորովինետն սննդանյութերն անհրաժեշտ են ինչ-
պես կյանքը պահպանելու, այնպես ել ձուն գո-
յացնելու համար:

Հավերն առանձնապես շատ են ուտում գար-
նանը. սա բացառքվում է նրանով, վոր ձմեռ-

վա ընթացքում հավի հյուծված որդանիզմը շատ սննդանյութեր եւ պահանջում իր կորցրած ուժերը վերականգնելու համար:

Աշնանը հավը բնագգաբար շատ եւ ուտում, յեռանդի պաշար հավաքելով ձմեռվա համար. սննդանյութի ափեցուկը գնում եւ ձուն գոյացնելու, և հավը վերսկսում եւ ձու ածելը:

Ամռան վերջը ժամանակավորապես դադարում եւ ձու ածելուց. այդ ժամանակ հավերից շատերը փետուրները փոխում են, անկասկած այդ պրոցեսը հիվանդադին եւ անցնում: Բոյոր սննդանյութերը գնում են փետուր գոյացնելու:

Ուժեղ շողը, ախորժակի բացակայությունը, փետրափոխությունը, ալդ բոլորի վրա ավելացրած նաև զարնան՝ ուժեղ թափով ձու ածելուց հյուծված որդանիզմը, պատճառ են գառնում, վոր հավը դադարի ձու ածելուց:

Զմեռը, ցրտերը վրա համնելուն պես, դադարում եւ ածելուց, և դա բացատրվում եւ նրանով, վոր այն մննդանյութերը, վորոնք պետք եւ գնալին ձու գոյացնելուն, գնում են մարմի ջերմությունը պահպանելու համար. բայց գարունը բացվելուն պես, յերբ արևի ճառագայթներն սկսում են տաքացնել, մարմի ջերմությունը պահպանելու համար սննդանյութերի անհրաժեշտությունը վերանում եւ:

Այժմ տեսնենք, թե ինչպես և ինչնվ կարելի յեւ ու հարկավոր կերակրել հավերին:

Իրավացի կերպով հավին անվանում են ամենակեր կենդանի. իրոք նա զգվող չեւ և շնորհակալությամբ ուստում եւ այն բոլորը ինչ առալիս եւ մարդը, իսկ կերի պակասը գտնում ենքը:

Պետք եւ տեսնել, թե ինչպիսի հոգատարությամբ և ուշադրությամբ իրենց համար կեր են փնտում նրանք: Հավի հայացքից չի կրիպի վոչ մի վորդ, բզեզ, և անոգուտ չի կորչի պատահար գետին թափած և վոչ մի հատիկ, մանավանդ աշնանը, կալի ժամանակ:

Հատկապես ձեռնտու յեւ հավեր պահել պտղատու այգիներում, վորտեղ հավերը վոչընչացնում են վորդերին և պարարտացնում հողը: Այն ալգիներում, վորտեղ հավեր են պահվում, բերքը $25^{\circ}/_0$ -ով բարձրանում եւ: Ամերիկայում հաշվի առան այս հանգամանքը, և այդեզործությունը մեծ ոգուտներով տարվում եւ թոշնաբուծության հետ միասին:

Առաջին պահանջը, վոր պետք եւ պահպանել հավերին կերակրելիս, դա կերի թարմ, չըխկած ու չփտած լինելն եւ:

Հավերի համար հիմնական կեր հանդիսանում է հատիկը: Հատիկն ավելի ձեռնտու յեւ տալ դո-

լորչիով խաշած (ուռած) վիճակում, բայց պետք
ենկատի ունենալ, զոր խաշած կերը հավերին
ձանձրացնում ե, դրա համար պետք ե փոխա-
րինել յերբեմն չոր հատիկով:

Ձմեռը, յերբ հավերը հավաքնումն են լի-
նում, առանձնապես կարևոր ե տալ միս (ձիու),
հում կաղամբ, շաղգամ, յերեքնուկի կամ յե-
ղինջի փշրանք, գլուխ սոխ և յեփած գետնա-
խնձոր: Այս բոլորը լավ խառնել ցորենի թե-
փի հետ և այնպես տալ հավերին:

Միսը պետք ե կտրատել այն հաշվով, զոր
հավը կարողանա հեշտությամբ կուլ տալ: Յերբ
պատահում են մոխ խոշոր կտորներ, հավը վա-
խենալով, թե կարող են ուրիշները խլել իրենից,
փախչում, հեռանում ե կերամանից, մտնում մի
անկյուն և աշխատում կուլ տալ մոխ կտորը,
իսկ այդ ժամանակ նրա ընկերուհիներն ուտում
են բոլոր համեղ կտորները, և նա քաղցած ե
մնում:

Ամառ ժամանակ հավերը վերոհիշյալ կե-
րերի կարիքն առանձնապես չեն զգում և առա-
տությամբ զտնում են ամեն տեսակի վորդեր,
բզեզներ, թրթուրներ, խոտեր, յերեքնուկ, յե-
ղինջ և այլն:

Հավի մնվելու գործում պակաս դեր չեն
խացում նաև հանքալին կերերը, ինչպես, որի-

նակ՝ հանգցրած կիրը, ալրված վոսկը, ձվի կճեռը, խոչը ավողը և ածուխը (ամուր տեսակը):

Հավի որդանիզմի համար կիրը հարկավոր ե վոսկըներ (կմախքի) և ձվի կճեպ գոյացնելու համար. նկատված ե, վոր կրի բացակայության ժամանակ հավերը ձուն «թափում են» (առանց կճեպի լեն ածում). հարկավոր ե միայն տալնըանց այլած վոսկը կամ հանգցրած կիր, և նըանք կոկսեն արդեն կճեպով ձու ածել:

Ինչողես հայտնի լի, հավերն ատամ չունեն, բայց այն փոքրիկ քարերն ու ապակու կտորները, վորպիսիք կուլ են տալիս հավերը, հաջողությամբ փոխարինում են ատամներին և կերակուրն ազում ստամոքսում:

Ածուխն այն հատկությունն ունի, վոր դեպի իրեն ե քաշում թռչունի աղիքների մեջ կուտակված գաղերը: Ածուխը պետք ե տալ ծեծած դրությամբ (սիսեռի մեծությամբ):

Բոլոր հիշված հանքերը պետք ե բավական քանակությամբ պահել հավաքնում, մանավանդ ձմեռը:

Պետք ե հիշել, վոր հավերին կարելի լե կերակրել ամեն տեսակի հատիկներով: բայց վոչ միորինակ. նույնիսկ ցորենի հատիկի նման համեղ ու սննդաբար կերը հաճախ գործածելու դեպքում ավելանում ե, և հավերը հրաժարվում

են ուժել։ Ամենից լավս ե, միքանի տեսակ համարիկներ ծեծել, խառնել իրար և այսպես տալ։

Հավագույն սննդարար հատիկներ են համարը՝ վում 1) ցորենը, 2) յեգիպտացորենը, 3) գարին, 4) վարսակը, 5) կորեկը, 6) սիսեռը, 7) կանեփը։

Սովորաբար գյուղական պարմաններում հավերին կարելի լե կերակրել սրական յերկու անդամ՝ առավոտը և յերեկոյան։

Ավելի լավ ե յերեկոյան հատիկ տալ, վորովինետե նա ավելի յերկար ե մարսվում, և հավի սուամոքսը զիշերը դատարկ չի մնում։

Յեթե հավաբունը ցուրտ ե, հատիկը կարելի յե տալ ցամքարի վրա (յեթե միայն մաքուր ե): Հավերը ցամքարի մեջ հատիկներ փընտռելով տաքացնում են իրենց մարմինը։

Ամառը հավերին պետք ե կանուխ գուրս թողնել հավաբնից (ժամը 4-ին). այդ ժամանակ վ շշերն ու բղեղները դեռ հողի մեջ մտած չեն լինում, և հավերը մեծ ոգուտ ստանալով ուտում են այդ բոլորը։

Հավերին առավոտ կանուխ կերակրելը ձեռնուտու չե. պետք ե հնարավորություն տալ նրանց (անոթի փորին) հավաքել բոլոր միջատները, վորից հետո միայն միքիչ կերակրել հատիկով։

Կերը պետք ե այնքան տալ, վոր առանց մնացորդի բոլորն ուտպի։

ՅԵՐԵ ՈՒԶՈՒՄ ԵՍ ՅԵԿԱՄՈՒՏ ՍՏԱՆԱԼ ՀԱՎԱ-
ՐՈՒՇՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԻՉԻՐ ՅԵՎ ԿԱՏԱՐԻՌ ՀԵ-
ՏԵՎՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Շինել հավերի համար չոր, լուսավոր,
առանց ծակուծուկերի հատակով (եժան) շենք:

2. Թառը շինել մեկ մետրից վոչ բարձր,
մի մակերեսի վրա. յուրաքանչյուր ձողի լայնու-
թյունը $6\frac{1}{2}$ սանտ. և ամեն մի ձող իրարեց
հեռու լինի 40 սանտ., վոչ պակաս:

3. Հովարնի անկյունում ավազախառն մո-
խիր ածա, ցանկապատիր տախտակով, վորպեսզի
մոխիրը չցըվի: Հավերը մոխրի մեջ «լողանա-
լով»՝ վոչնչացնում են վոշիլներին, վորոնք շատ
են նեղացնում նրանց:

4. Հավարնում միշտ ունեցիր բավական
քանակությամբ հանգցրած կիր, խոշոր ավազ,
ծեծած ածուխ և ծեծած ալրված վոսկը:

5. Հավերի խմելու ջուրը փոխիր որական
յերկու անգամ, հավերին առանց ջրի յերբեք
մի թողնի:

6. Բներում ծղոտը փոխիր շաբաթական
մեկ անգամ:

7. Հավարունը միշտ մաքուր պահիր և տա-
րեկան մեկ անգամ սպիտակացրու, իսկ թառե-
րին նավթ բսիր:

8. 10 – 15 հավի համար պահիր 1 տքաղադ:

9. Հիվանդ հավերին վոչնչացրու, իսկ սատ-
կածներին այրիր կամ խորը թաղիր հողի մեջ:

10. Տոհմացուի համար պահիր ամենառութեղ

և առողջ հավերին, վորոնք շատ ու խոշոր ձույն ածում:

11. Թխակ տակ դիր ամենալավ հավերի ձվերը:

12. Զվից նոր դուրս յեկած ճուտերին կերակրիր միայն 48 ժամից հետո. մինչ այդ ժամանակը ճուտերի դեղնուցը դեռևս չի ներած ծծվել և չի մարսվել:

Շատ կերակրելուց ճուտերի մարսողությունը խանգարվում է, նրանք լուծում են ու սատկում:

13. Ճուտերին նույնպես հարկավոր են հանքեր, ածուխ, հանգցրած կիր, ավազ և այլն:

14. Վոտների քոս ունեցող հավերի վոտներին քսիր կանաչ սասպոն և 2 որից հետո լվատաք ջրով. այդ բանը կրկնիր 2-3 անգամ:

15. Ճուտերին թառ բարձրացրու. վոչ շուտ, քան 3-4 ամսական հասակը. շուտ թառելու դեպքում նրանք ծոռում են իրենց կրծոսկրը:

16. Բոլոր ջահել աքաղաղներն ու վառեկները ծախիր:

17. Ամբողջ ձուն և խոտանված հավերն ու ճուտերը հանձնիր կոռապերացիալին:

18. Խուսափիր մասնավոր գնողներից. նրանք ամեն կերպ աշխատում են չնչին արժեքով գնել քո արտադրանքը:

19. Ցեթե տնտեսությանդ մեջ տարսափոխիկ (վարակիչ) հիվանդություն ծաղի, անմիջապես հայտնիր շրջանալին անասնաբուժին, գյուղատնտեսին, կամ ՑԵ չե թոշնաբուժության վերաբերյալ բոլոր հարցերով անմիջականորեն դիմիր չողժողկոմատի գլուղվարչությանը Ցերևանում:

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039214

ԳԻԱԸ Յ ԿՈՎ. ՄԱՍ. (1/2 մտիվու)

A 4293



Г. Григорян

Выбор кур, уход и кормление

Госиздат СССР Армении
Эривань—1930